

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՇՈՒՐՋ

Ինչպես հայտնի է, ժամանակակից տնտեսական պայմաններում պետությունը, համարվելով բաժնետոմսերի խոշոր փաթեթների սեփականատեր, հանդես է գալիս որպես տնտեսավարող սուբյեկտ, որի նպատակն է ինչպես պետական սեփականության արդյունավետ կառավարումը, այնպես էլ՝ ընդհանուր ներդաշնակ ձեռնարկատիրական միջավայրի ստեղծումը: Պետական կապիտալի մասնակցության և կառավարման վրա ազդելու չափանիշների տեսանկյունից կարելի է առանձնացնել երեք տեսակի բաժնետիրական ընկերություններ<sup>1</sup>.

- **100% պետությանը պատկանող կապիտալով ԲԸ-ներ**, որոնց միակ բաժնետերեր պետությունն է, և նրա կառավարչական որոշումները չեն սահմանափակվում մյուս բաժնետերերի կողմից: Այս տեսանկյունից այդ ԲԸ-ների և պետական ձեռնարկությունների միջև տարբերություն չկա:
- **ԲԸ-ներ, որոնցում բաժնետոմսերի հսկիչ ծրարը կամ «ոսկե» բաժնետոմսը պատկանում է պետությանը:** Այս տեսակի ԲԸ-ներն ավելի հեռանկարային են, քան ՊԲԸ-ները: Բաժնետոմսերի հսկիչ ծրարը պետությանը հնարավորություն է տալիս սեփականատիրոջ իրավունքներն իրականացնել ԲԸ կառավարման մարմիններում (բաժնետերերի ընդհանուր ժողով, ընկերության խորհուրդ) իր ներկայացուցիչների միջոցով, քանի որ ԲԸ խորհրդի անդամների առնվազն 51%-ը պետք է լինեն պետության ներկայացուցիչները: Բաժնետիրացված ձեռնարկության կառավարման վրա ավելի պակաս ազդեցություն ունի «**ոսկե**» բաժնետոմսը: Այն կառավարությանը ոչ մի իրավունք չի տալիս ձեռնարկության ղեկավարմանը կամ շահույթների բաշխմանը մասնակցելու գործում, սակայն հնարավորություն է տալիս ընկերության կարևորագույն հարցերի վերաբերյալ բաժնետերերի կողմից որոշում ընդունելու դեպքում դնելու վետո: «Ոսկե» բաժնետոմսը լուծում է հետևյալ խնդիրները.
- պետության կողմից ընկերության կառավարման լծակների պահպանում,
- մասնավորեցվող բաժնետիրական ընկերություններում օտարվող բաժնեմասի մեծացման արդյունքում պետական բյուջեի մուտքերի ավելացում,
- մասնավորեցման ժամանակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ներդրումային հետաքրքրության ավելացում:

«Ոսկե» բաժնետոմսը հանդիսանում է պետության քաղաքական և հասարակական շահերի պաշտպանության գործիք և կարող է մարվել բաժնետիրոջ հատուկ պահանջով:

- **ԲԸ-եր, որոնցում պետության բաժնետոմսերը հսկիչ ծրար չեն ձևավորում:** Այդ ընկերություններում պետության ներկայացուցիչը, սովորաբար, խոշոր ներդրողներից մեկն է և իր գործունեությամբ ազդում է ընկերությունում ընդունվող որոշումների վրա, կազմելով «խումբ» մյուս ներդրողների հետ: Այսինքն, չտիրապետելով հսկիչ ծրարին, պետության ներկայացուցիչը թեև ԲԸ-նին չի կարող թելադրել իր կամքը, սակայն շատ դեպքերում, կարող է որոշիչ ազդեցություն ունենալ բաժնետերերի ժողովի կողմից ընդունվող որոշումների վրա:

Համաձայն **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության** կողմից մշակված «Պետական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների»<sup>2</sup>.

- Պետական ընկերությունների իրավական և նորմատիվ հիմքերը պետք է ապահովեն պետական և մասնավոր հատվածի ընկերությունների միջև շուկայական մրցակցության հավասար պայմաններ:

<sup>1</sup> Ա.Խ. Մարկոսյան, Պետական ձեռնարկությունների ապապետականացման կառավարում. մեթոդաբանություն, ռազմավարություն և արդյունքներ, Եր., «Լույս», 1997, էջ 240:

<sup>2</sup> <http://www.oecd.org/daf/ca/corporategovernanceofstate-ownedenterprises/45885495.pdf>

- Պետությունը պետք է գործի որպես իրազեկ և ակտիվ սեփականատեր և մշակի սեփականության իրավունքի իրացման հստակ և շարունակական քաղաքականություն:
- Պետությունը և պետական ընկերությունները պետք է ճանաչեն բոլոր բաժնետերերի իրավունքները:
- Պետության քաղաքականությունը պետք է ամբողջությամբ ճանաչի պետական ընկերությունների պարտավորությունները՝ բոլոր շահագրգիռ կողմերի հանդեպ:
- Պետական ընկերությունները պետք է պահպանեն թափանցիկության անհրաժեշտ մակարդակ:
- Պետական ընկերությունների տնօրենների խորհուրդները պետք է օժտված լինեն անհրաժեշտ իշխանությամբ, լիազորություններով և օբյեկտիվությամբ՝ կառավարիչների գործունեության ռազմավարական կառավարման և վերահսկողության գործառույթի իրականացման համար:

Ինչպես հայտնի է, պետական ընկերությունները մասնավոր ընկերությունների հետ միասին հանդիսանում են կայուն արդյունաբերական զարգացման կարևորագույն գործոններ: Սեփականության այլ ձևերի տնտեսավարող սուբյեկտներից պետական ընկերությունները տարբերվում են նրանով, որ վերահսկողության տեսանկյունից բոլոր պետական ընկերությունները այս կամ այն չափով վերահսկվում են կառավարության կողմից: Պետական ընկերությունները հետապնդում են ոչ միայն առևտրային նպատակներ, այլև ոչ առևտրային՝ ազգաբնակչության զբաղվածությունը, սոցիալական ոլորտի ֆինանսավորումը, արդյունաբերության ցածր շահութաբեր և նախապես վնասաբեր (սակայն սոցիալապես կարևոր) ճյուղերում գործունեությունը և այլն:

Համաշխարհային տնտեսական պրակտիկան վկայում է, որ պետական ընկերությունները շահույթի ստացման հարցում ոչնչով չեն տարբերվում սեփականության այլ ձևեր ունեցող ընկերություններից:

Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսավարող սուբյեկտները ձգտում են հնարավոր նվազագույն ծախսումներով ստանալ առավելագույն շահույթ և խուսափել հնարավոր վնասներից: Գոյություն ունեն տնտեսական գործունեության ոլորտներ, որտեղ կապիտալի վերադարձի ժամանակահատվածը բավականին երկար է, ներդրումների ծավալը մեծ է, սոցիալականացման մակարդակը բարձր է, և տնտեսական արդյունավետությունն ակներև չէ, ինչը ընդհանուր առմամբ կարող է բերել վնասների: Մասնավոր ընկերությունը չի ցանկանում աշխատել այսպիսի ոլորտներում, քանի որ նրա համար կարևոր և միակ չափանիշն է հանդիսանում շուկայական գերիշխող դիրքերի և տնտեսական արդյունավետության ապահովումը: Այսինքն, գոյություն ունեն տնտեսական ճյուղեր և ուղղություններ, որտեղ մասնավոր ընկերությունը պարզապես չի մտնի, չնայած որ այս ոլորտները և նրանց արտադրանքը կենսապես կարևոր են հասարակության համար: Տվյալ իրավիճակում առաջացող հիմնախնդիրները լուծում են պետական ընկերությունները:

Պետական ընկերությունները սովորաբար «կրում են» մեծ սոցիալական բեռ, որպես կանոն ունեն ցածր տնտեսական արդյունավետություն և, միաժամանակ, զբաղեցնում են կենտրոնական դիրքեր ազգային տնտեսությունում: Բացի այդ, պետական ընկերությունները սովորաբար գտնվում են ռեսուրսների տեղաբաշխման վայրերում, քաղաքական և վարչական կենտրոններում, «զգայուն» (օրինակ սահմանամերձ) գոտիներում, որպեսզի կառավարության կողմից ավելի հարմար լինի իրականացնել իր մակրոկառավարման գործառույթը: Պետական ընկերությունները, զբաղվելով տնտեսական գործունեությամբ, միաժամանակ, նաև պետք է իրենց վրա վերցնեն կառավարության վարչական գործառույթների մի մասը և նպաստեն մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության հաջող իրականացմանը: Պետական ընկերությունների նպատակները բազմաբնույթ են, քանի որ նրանք լուծում են կարևոր խնդիր՝ ապահովել ազգաբնակչության հնարավորինս բարձր կենսամակարդակը: Պետական ընկերությունը ազգային տնտեսության սուբյեկտ է և կառավարության կողմից մակրոկարգավորման իրականացման հիմնական միջոց: Պետական ընկերությունները պետք է կրեն սոցիալական պատասխանատվություն, ինչպես իրենց ներսում, այնպես էլ նրանից դուրս (կրթություն, առողջապահություն, շրջակա միջավայր, բնակարանաշինություն, հանգիստ, ժամանց և այլն):

Պետական սեփականություն հանդիսանալու հետևանքով պետական ընկերությունները հանդիպում են նաև որոշակի դժվարությունների. ծանր սոցիալական բեռ, տնտեսավարման գործընթացում չափազանց մեծ վարչարարություն, շուկայական տնտեսության հետ անհամատեղելիության խնդիրներ: Բացի այդ, պետական ընկերությունների տնտեսական գործունեության կառավարման գործընթացում միաժամանակ կարևորվում են և՛ սոցիալական արդարությունը, և՛ տնտեսական արդյունավետությունը: Հասկանալի է, որ սցիալական արդարության և տնտեսական արդյունավետության միաժամանակյա ապահովումը բավականին բարդ գործ է: Հատկապես, դրա համար պետական ընկերությունների ստեղծումը կրում է համակարգային, բազմակողմանի և երկարաժամկետ բնույթ:

Ինչպես հայտնի է, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունները շարունակում են տնտեսության մեջ կատարել նշանակալի դեր: Ստորև բերված աղյուսակը և գծապատկերը տվյալներ են պարունակում պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ:


Աղյուսակ 1

**Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը (1998-2013թթ.)<sup>1</sup>**

| Անվանումը                                            | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|------------------------------------------------------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ | 854  | 837  | 693  | 661  | 648  | 641  | 635  | 579  | 513  | 513  | 493  | 478  | 438  | 424  | 423  | 404  |

Գծապատկեր 1

**Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը (1998-2013թթ.)<sup>2</sup>**



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 1998-2013թթ. տեղի է ունենցել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի աստիճանական նվազում: Այսպես, 2013թ. 1998թ. համեմատությամբ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը նվազել է 450-ով և կազմել 404: Վերջինս արդյունք է ինչպես ընկերությունների մասնավորեցման, այնպես էլ նրանց սնանկացման և լուծարման: Ինչպես հայտնի է, լուծարվող ընկերությունների մի մասը երկու անգամ մասնավորեցման ներկայացված և գնորդների մոտ հետաքրքրություն չառաջացրած ընկերություններ են, իսկ մյուս մասը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չնախատեսված իրավական կարգավիճակ ունեցող, չաշխատող, ֆինանսատնտեսական

<sup>1</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)

<sup>2</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)

վատ ցուցանիշներ ունեցող կամ գործունեության հեռանկարներ չունեցող ընկերություններ են<sup>1</sup>: Ստորև բերված աղյուսակը և գծապատկերը տվյալներ են պարունակում մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:


Աղյուսակ 2

**Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը (2001-2013թթ.)<sup>2</sup>**

| Անվանումը                  | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|----------------------------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Լուծարված ընկերությունները | 36   | 43   | 49   | 56   | 62   | 82   | 98   | 134  | 173  | 259  | 319  | 347  | 359  |

Գծապատկեր 2

**Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը (2001-2013թթ.)<sup>3</sup>**



Ինչպես վկայում են վերոբերյալ աղյուսակի տվյալները, 2013թ.-ին 2001թ. համեմատությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված առևտրային կազմակերպությունների թիվն ավելացել է 323-ով և կազմել 359: Իհարկե, լուծարված ընկերությունների թվաքանակի ավելացումը բացասական երևույթ է, սակայն, եթե այն տեղի է ունենում շուկայի սանիտարական գործառույթի գործողության հետևանքով, ապա դա կարելի է համարել դրական երևույթ: Հասկանալի է, որ միայն արդյունավետ գործող ընկերությունների թվաքանակի ավելացմամբ է պայմանավորված մեր երկրի տնտեսության զարգացման ապագան:

Այժմ անդրադառնանք պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների թվաքանակին՝ ըստ պետության մասնակցության չափի ստորև բերված աղյուսակի և գծապատկերի միջոցով:

Աղյուսակ 3

**Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեզիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների քանակն՝ ըստ պետության մասնակցության չափի (1994-2013թթ.)**

| Տարեթիվը | ՊԲ<10% |     | 10%<ՊԲ<50% |     | 50%<ՊԲ<75% |     | 75%<ՊԲ<100% |     | ՊԲ=100% |     |
|----------|--------|-----|------------|-----|------------|-----|-------------|-----|---------|-----|
|          | ՓԲԸ    | ԲԲԸ | ՓԲԸ        | ԲԲԸ | ՓԲԸ        | ԲԲԸ | ՓԲԸ         | ԲԲԸ | ՓԲԸ     | ԲԲԸ |
| 1994     |        |     |            |     | 1          |     | 2           |     |         |     |

<sup>1</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)


<sup>2</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)

<sup>3</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)

|      |   |  |    |    |    |   |     |    |     |   |
|------|---|--|----|----|----|---|-----|----|-----|---|
| 1995 |   |  | 32 | 5  | 16 |   | 251 | 14 |     | 9 |
| 1996 |   |  | 4  | 6  | 3  | 2 | 20  | 1  | 2   | 3 |
| 1997 |   |  | 3  | 8  | 2  |   | 2   |    | 1   |   |
| 1998 | 9 |  | 7  | 16 | 1  | 1 | 3   |    | 88  |   |
| 1999 |   |  | 2  | 2  | 2  |   | 2   |    | 123 |   |
| 2000 |   |  | 1  |    | 1  |   | 1   | 2  | 62  | 1 |
| 2001 |   |  |    |    | 1  | 1 | 2   | 4  | 39  | 2 |
| 2002 |   |  |    |    |    |   |     | 1  | 26  | 7 |
| 2003 |   |  |    |    |    |   |     | 2  | 13  | 4 |
| 2004 |   |  |    |    |    |   |     |    | 15  | 1 |
| 2005 |   |  |    |    |    | 1 |     | 1  | 6   | 2 |
| 2006 |   |  |    |    |    |   |     |    | 6   | 1 |
| 2007 |   |  |    |    |    |   |     | 2  | 99  | 1 |
| 2008 |   |  |    |    |    |   |     |    | 16  |   |
| 2009 |   |  |    |    |    |   |     |    | 12  | 3 |
| 2010 |   |  | 1  |    |    |   |     |    | 3   |   |
| 2011 |   |  |    |    |    |   |     |    | 3   |   |
| 2012 |   |  |    |    |    |   |     |    |     |   |
| 2013 |   |  |    |    |    |   |     |    |     |   |

Գծապատկեր 3

**Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների քանակն՝ ըստ պետության մասնակցության չափի (1994-2013թթ.)**



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների թվաքանակում, հիմնականում, գերակայում են ամբողջությամբ պետական (ՊԲ=100%) և 75% և ավելի բաժնեմասով (75%<ՊԲ<100%) պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը նպատակ ունի Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի հսկիչ ծրարը «պահել իր ձեռքում», որը կառավարության համար ամուր լծակներ է ստեղծում այդ ոլորտները կարգավորելու և կառավարության որդեգրած քաղաքականությունը կյանքի կոչելու համար:

Այժմ անդրադառնալով նաև պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեությանը ստորև բերված աղյուսակի միջոցով:

**Հայաստանի Հանրապետությունում 50% և ավելի պետական բաժնետոմսերով  
ընկերությունների բնութագիրը (2012-2013թթ. առ 01.01)<sup>1</sup>**

| h/h | Անվանումը                                        | 2012         | 2013         |
|-----|--------------------------------------------------|--------------|--------------|
| 1.  | Մոնիթորինգի ենթարկված ընկերությունների թիվը      | 347          | 355          |
| 2.  | Շահույթով աշխատած ընկերությունների թիվը          | 271          | 267          |
| 3.  | Վնասով աշխատած ընկերությունների թիվը             | 65           | 47           |
| 4.  | Շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվը | 11           | 17           |
| 5.  | Շահույթի ծավալը                                  | 3080341100   | 1954165000   |
| 6.  | Վնասի ծավալը                                     | 1387159800   | 15513313000  |
| 7.  | Ընդամենը ընթացիկ պարտավորություններ              | 147775095000 | 160575821000 |
| 8.  | Ընդամենը ընթացիկ ակտիվներ                        | 105290609000 | 111239431000 |
| 9.  | Աշխատողների քանակը                               | 29119        | 27826        |

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքներին համապատասխան՝ 2013թ. 2012թ. համեմատությամբ շահույթով աշխատած ընկերությունների թիվը նվազել է 4-ով, վնասով աշխատած ընկերությունների թիվը՝ 18-ով, շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվն ավելացել է 6-ով, ընկերությունների շահույթի ծավալը նվազել է 1 126 176 100 դրամով, վնասի ծավալն ավելացել է 14 126 153 200 դրամով, ընթացիկ պարտավորություններն ավելացել են 12 800 726 000 դրամով, ընթացիկ ակտիվներն ավելացել են 5 948 822 000 դրամով, և աշխատողների քանակը նվազել է 1293-ով: 01.01.2013թ. դրությամբ ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ են վճարել թվով 211 ընկերություն՝ 506 689 000 դրամի չափով: Հասկանալի է, որ նշված բոլոր ցուցանիշների բարելավումը լուրջ խնդիր է հանդիսանում ինչպես պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների, այնպես էլ ողջ հասարակության համար:


Ինչպես հայտնի է, պետական ընկերությունների շահութաբերությունը, որպես կանոն, ցածր է մասնավորներից: Շահույթը չի հանդիսանում պետական ընկերությունների գործունեության առաջնային նպատակը, իսկ վնասները փոխհատուցվում են բյուջեյից: Այդ պատճառով պետական հատվածը զարգացած երկրներում դարձել է էժան ծառայությունների մատակարարը, մասնավորապես՝ տրանսպորտային, փոստային, էլեկտրաէներգիայի և հումքի, նվազեցնելով ծաղրերը մասնավոր հատվածում: Նրան է պատկանում տնտեսությունում կայունացնող դերը՝ գնաճին հակազդելու, տնտեսական միջավայրում մրցակցության խթանման և համաշխարհային շուկայում ազգային արտադրանքի մրցունակության համար պայմանների ստեղծման միջոցով<sup>2</sup>:

Այժմ նկարագրենք պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ ընկերությունների թվաքանակի ստորև բերված գծապատկերի միջոցով:

<sup>1</sup> [http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM)

<sup>2</sup> В. Дасковский, В. Киселев, О мерах и формах государственного участия, Экономист, N 8, 2011, с. 36.

**Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը  
2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ**



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից մոնիթորինգի ենթարկած ընկերություններից 267-ն աշխատել են շահույթով, 47-ը՝ վնասով, իսկ 17 ընկերություններում շահույթ կամ վնաս չի ձևավորվել: Հուսանք, որ ապագայում շահույթով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների թիվն աստիճանաբար կավելանա:

Համաշխարհային տնտեսական պրակտիկան բազմիցս ապացուցել է պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների դերակատարման կարևորությունը (հատկապես ճգնաժամային պայմաններում): *Ernst & Young* բրիտանական աուդիտորական-խորհրդատվական ընկերության կողմից իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ 24 երկրից 12000 հարցվողների 40%-ը գտնում են, որ պետական ձեռնարկությունները մասնավորների համեմատ ապահովում են սպասարկման լավագույն որակ, ինչպես նաև կարող են հաջողությամբ մրցակցել նրանց հետ իրենց գործունեության արդյունավետության մակարդակով: Միաժամանակ, Չինաստանից հարցվողների 72%-ը և Ռուսաստանից հարցվողների 83%-ը գտնում են, որ ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի հանդեպ պետական վերահսկողության պահպանումը համապատասխանում է շատ երկրների շահերին<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003, 2006-2007 թվականների ծրագրերում» ընդգրկված և պետության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք պետական ընկերություններ հանվել են մասնավորեցման գործընթացից, քանի որ պետությունն այլևս մտադիր չէ վաճառել դրանք: Ավելին, այդ ընկերությունների համար մշակվելու են համապատասխան համակարգային ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավորություն կընձեռվի ապահովել այդ ընկերությունների բնականոն և արդյունավետ գործունեությունը<sup>2</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք առաջարկել պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

- Կառավարչական որակյալ կադրերի ընտրություն և կառավարման որակի բարելավում:
- Արդյունավետ ներդրումային մախազների մշակում և իրացում:
- Նոր մրցունակ արտադրատեսակների արտադրության կազմակերպում:
- Վնասով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում ճգնաժամային կառավարման ներմուծում:

<sup>1</sup> В. Дементьев, Госкорпорации в экономической стратегии России: К продолжению дискуссии в связи с «антигоскапиталистическими» установками федеральных властей, Российский экономический журнал, N 3, 2011, с. 20.

<sup>2</sup> [http://www.privatization.am/index.php?page=\\_-20&hl=am\\_AM](http://www.privatization.am/index.php?page=_-20&hl=am_AM)

- Վնասով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպում:
- Կորպորատիվ կառավարման հիմնական սկզբունքների ներդրում:
- Գործունեության թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովում:

Այսպիսով, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար, ուստի վերջինս պետք է գտնվի պետության և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՄՆԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎԱՆ ԸՈՒՐՋ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային  
կենտրոնի դասախոս

Համառոտագիր

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ-ում պետական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդրին: Հաշվի առնելով պետական ընկերությունների մեծամասնությունում առկա գործունեության բարելավման հիմնախնդիրը, հոդվածում փորձ է արվել բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են նպաստել նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հատուկ ուշադրություն է հատկացվել երկրի տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունները պետական սեփականության կազմում պահպանելու խնդրին:

Քանի որ պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումն ունի ռազմավարական նշանակություն տնտեսության հետագա զարգացման համար, ապա վերջինս պետք է գտնվի պետության և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

**Քանակի բառեր.** պետական ընկերություններ, պետական մասնակցությամբ ընկերություններ, պետական սեփականություն, գործունեության բարելավում, արդյունավետություն, տնտեսություն, պետություն, հասարակություն:

ОБ УЛУЧШЕНИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ГОСУДАРСТВЕННЫХ КОМПАНИЙ  
И КОМПАНИЙ С ГОСУДАРСТВЕННЫМ УЧАСТИЕМ

АРМИНЕ ЗАКАРЯН, к.э.н.

преподаватель Международного  
научно-образовательного центра НАН РА

Аннотация

Настоящая статья посвящена проблеме улучшения деятельности государственных компаний в РА. Учитывая наличие проблемы улучшения деятельности в большинстве государственных компаний в РА, в статье сделана попытка выявить основные факторы, способствующие повышению эффективности их деятельности. Особое внимание уделено задаче сохранения в государственной собственности компаний, имеющих стратегическое значение для развития экономики страны.

Поскольку улучшение деятельности государственных компаний и компаний с государственным участием имеет стратегическое значение для дальнейшего развития экономики, то эти компании должны постоянно находиться в центре внимания как государства, так и общества.

**Ключевые слова:** государственные компании, компании с государственным участием, государственная собственность, улучшение деятельности, эффективность, экономика, государство, общество.

ON BETTER AND MORE EFFICIENT PERFORMANCE BY STATE-OWNED  
(FULLY OR PARTIALLY OWNED) ENTERPRISES

ARMINE ZAKHARYAN, Candidate of Sciences (Economics)

Lecturer  
International Scientific - Educational Center  
National Academy of Sciences  
Republic of Armenia

Abstract

The article discusses the issues on improving the performance of state-owned enterprises in the Republic of Armenia. Taking into account the current issues on improving performance of majority of the state-owned enterprises, the article attempts to identify the main factors that could increase the efficiency of the performance of these companies. Particular attention is paid to the issue on keeping companies of strategic importance to the economic development among state-owned (fully or partially owned) enterprises.

Since the better or more efficient performance by the state-owned enterprises (fully or partially owned) is of strategic importance to the future economic development of the nation, the performance of these companies needs to be under consideration of the government and society.

**Keywords:** state-owned enterprise, partially state-owned company, state ownership, better performance, efficiency, economy, state, society.